

22. ՓԵՐՈՒ ԽԵՔԱԹ

Կէղի, չէղի թագավորըմ կէղի, թագավորին տղե մի կէղի։ Տղեն ժամանակին կհասի։ Թագավոր կէրթա մե ախչիկըմ գուղա, ախչիկ բերա տղի վրեն պսակա։

Էն գիշեր օր տղեն կէրթա ուր կնկա մոտ, սահաթ չորսին տըղեն դուս գելի։ Փերիք թագավորի տղին կգողնան, տանին։

Թագավորի հարս, մե սահաթ օր կընցնի, կիշկա ուր մարթ չէկավ, կըսե. «Ի՞նչ էղավ, մարթ ինչի՞ չէկավ»։ Մինչև աղոթրնին մարթ չէկավ։ Ախչիկ էլավ գուռ բացեց, իշկեց, մարթ չկա։

Էկավ նստավ լաց։ Սահաթի ութին թագավորի կնիկ էլավ տղի հ՚օդեն գնաց։ Տեսավ օր խարս գիլեր, խարսին ըսաց.

— Ընչի՞ գիլաս։

Խարս պատասխան չտվեց։ Թագավորի կնիկ գնաց թագավորին ըսաց.

— Մեր խարս նստե լաց կէնա, մեր տղեն էնտեխ չէ։

Թագավոր ելավ տղի հ՚օդեն գնաց, խարցուց. —Ինչի՞ գիլաս, իմ տղեն դու ես կորցե, իմ տղեն քեզնե գուղեմ։

Խարսն ըսաց.— Սահաթի չորս կէղեր, քու տղեն ելե գացե, էլ չէկե։

Թագավոր ըսաց.— Զըմ գինա, իմ տղեն դո՞ր էղի, դու պտի գտիս, բերիս։

Թագավոր էդ խոսք օր ըսաց, թագավորի հարսը էլավ, փարա

վերցուց ուր խետ, գնաց յոթ ճամփա-բաժին խերու խանըմ շիքեց, էրթրցող, գալացող մի ամսվան տեսածն, լսածն կսա էնե (պատմե)։

Օրըմ աշըղըմ, ուր հ'ընկեր ճամփա էկան, մեշի մի մեշ ախպուրըմ կար, ախպրի վրեն մե քիչ խաց կերան, աշըղն ըսաց ուր հ'ընկերոջ.

— Կանի, էստեխ փշում ես քնիմ։

Աշըղն էդտեխ դլոխ դնեց ու քնավ։ Հ'ընկեր հ'իմաց մնաց։ Տեսավ օր էրկու խատ եղվընեկ էկան ախպրի վրեն իջան, եղվընեկու թերուր խանին, բոռացին՝ «Արաբ»։ Տղեմ իջավ էկավ։

Տղեն, էդ եղվընեկներուց մեկ տկլողցան հավուզի մեշ լողկըցան։ Մեկ ախչիկ էր, մեկ լէ տղեն, հավուզից էլան։

Եղվընեկ ըսաց.— Արաբ, քոչա։

Ասելուն պես աղեն, եղվընեկներ թռան գացին։

Էդ աշըղի հ'ընկեր աշուղին հ'իմցուց։

Ըսաց.— Էլի էրթանք։

Աշըղի հ'ընկեր ըսաց.— Ուսթա, ես նոր հըմլա բան մի տեսա.

Աշըղն ըսաց.— Ի՞նչ էր տեսար։

Ըսաց.— Էրկու խատ եղվընեկ էկան, տկլողցան, էլան մարթու կերպ,— մեկ տղա, մեկ ախչիկ, էդ ախպրի մեջ լողկցան։ Եղվընեկ ըսաց՝ «Արաբ, քոչա», էլան թռան գացին։

Էլան ընկան ճամբախ, գացին։ Գացին էդ յոթ ճամփա-բաժին, խանի մեջ գիշեր մացին։ Խաց կերան։ Խանչին խարցուց աշըղի մոտեն.

— Ըսկի էսօր ի՞նչ եք լսե։

Ըսաց։— Բան մի չլսեր ենք։

Ըսաց.— Ծեր լսած, ծեր տեսած ընձի ասեք։

Աշուղ ուր գիտցած աշըղական խոսքեր ըսաց։ Խանչին ըսաց.

— Ընձի պետք չեն։— Աշըղի հ'ընկերոջ մոտեն խարցուց.— Մեկ բան էլ դու կսա էնա։

Ըսաց.— Ես բան չըմ գինա։

Աշըղն ըսաց.— Ընչի՞ չը դինաս, էրեկվան քու տեսածն ընձի ըսա։

Էդ խանչին խարցուց թը.— Էրեկվան քու տեսածն ի՞նչ ա, ընձի ըսա։

Ըսաց.— Իմ էրեկվան տեսած. ճամփու խետ կիգենք, մեշեմ ինգանք, մեշի մեջ ախպուրմ կար, ախպրի վրեն նստանք, խաց կերանք, աշըղն ըսաց՝ «Ես կքնիմ», աշըղն քնավ, ես հ'իմաց մացի։

Տեսա օր էրկու խատ եղվընեկ իշան էդ ախպրի վրեն, ուրանց շորեր խանին, ախպրի մեջ լողկցան, մեկ խորոտ ախչիկմ էր, մեկ լէ՝ խորոտ տղեմ էր։ Էլան ուրանց շորեր խաքան, ըսեցին՝ «Արաբ, քոչա» ու թռան գացին։

Խանչին ըսաց.— Ծրգի փարա կիտամ արեք իմ խետ, էն ախպուր իմ նշանց տվեք։

Աշըղ մնաց, աշըղի հ՝ընկեր խըտ էդոր էլավ գնաց։ Գացին էդ ախպրի վրեն, աշըղի հ՝ընկեր ըսաց.

— Էս ախպուրն ի։

Ինանչին մարթուն ճամփու գնեց։ Էդ տեխ մնաց ինք, տեսավ օր էրկու խատ եղվընեկ էկան, էդ ախպրի վրեն իջան, շորեր խանեցին. տեսավ օր էն մեկ ուր իրիկն էր։ Վազավ օր ուր իրիկ բըռներ, եղվընեկներ ուրանց շորեր խաքան ու ասեցին՝ «Արաբ, քոչա»։ Խանչին էդտեխ մնաց, էնոք թռան գացին։ Խանչին ընգավ ճամբախ, շատ ու քիչ աստված դինա ինչքան ճամբախ գնաց։

Օրերուց օրըմ էդի ցավ քաշեց, չոլի մեջտեխ ախպուրըմ կար, էդ ախպուրի մոտ պառկավ, տղեմ բերեց։ Տղեն շորերու մեջ փաթեց, էլավ ախպուր կլվացվեր, ախպրի մեջ խնձորի տեսակ քարմ տեսավ, վերցուց ու պահեց։ Գրկեց ուր տղեն, ճամբախ ընկավ։

Գնաց ճոչ քաղքի մի ռաստ էկավ։ Մտավ էդ քաղքի մեջ, մարթըմ խարցուց թե. — Դու ինչ կնիկ ես։

Ըսաց.— Ես մարթ չունիմ։

Ըսաց.— Չէղի՞ս ընձի ախչիկ։

Ըսաց.— Կէղիմ։

Տարավ ուր տուն էդ ախչկան, ուր տղին պախեց։ Մե էրկու տարի մնաց։ Տղեն գելեր դուս խաղ էներ։ Խնձորի տեսակ քարը տղի ծեռ տվեց մեր։ Տղեն դուռ խաղ էնեց։

Թագավոր ուր լալեն քաղքի մեջ կղվռնին։ Էկան էդ տուն, տեսան օր էրեխե մի խաղ կէնա, էրեխի ծեռ անգին քարըմ կա։

Թագավոր ըսաց ուր լալին.— Ես թագավորըմ եմ, էսմլա անգին քար չունիմ։

Լալեն ըսաց.— Էդ քարի առնել շատ ըռհաթ ա։

Թագավոր ըսաց.— Ի՞մալ ըռհաթ ա, անգին քարըմ ունեցող խելացի մարթ կէղի։

Լալեն ըսաց.— Էն մարթ չգինա թե անգին քար ա, լուսուն կճամփենք, մըր խըղինի պատ քանդել կիտանք, կըսինք թե. «Թագավորի խըղինեն ձևած տարած ան, թագավորի անգին քար խետ տարած ան». կիգանք անգին քար էդ մարթուց կտանինք։

Եւ դարձան, դեմի թագավորի պալատը գացին։

Էդ գիշեր թագավորի լալեն խրդինի պատը քանդեց։

Լուսուն ըսեցին թե. «Թագավորի խրզինեն ձևած ան, անգին քարեր տարած ան»։

Էլան քաղքի մեջ զվռնելով, գացին էդ մարթու դռան։ Էդ քարը էրեխի ծեռ խաղ կէնա։ Առան քար ու էդ տան մարթ տարան բրոնատուն գնեցին։

Էդ ախչիկ գնաց թագավորի պալատ, ըսաց թե.— Ընչի՞ իմ խոր բոներ եք։

Թագավոր ըսաց.— Քու խեր դող է։

Ըսաց.— Իմա՞լ գող է։

Ըսաց.— Էկավ իմ խրզինեն ձևեց, իմ անգին քար տարավ։ Ուր էրեխի ծեռ տեսա։

Ըսաց.— Իմ խոր թոր, կփոշմընիս վերջ։

Ըսաց.— Ես չփոշմընիմ, քու խեր գող ա։

Ըսաց.— Իմ խեր թո՛ր, խինդ տարի ժամանակ տու, թե կըսես՝ «էդ իմ անդին քարն ա», քըզի քանի՞ խատ անգին քար ա տարած։

Թագավորը կըսա.— Մեկ խատ։

Ախչիկ կըսա.— Էդ մե՞կն ա։

Թագավոր կըսա.— Հա՛, էդ մեկն ա։

Ախչիկ կըսա. —Կղանչա քու սադրազամներ։

Թագավոր կղանչա ուր սադրազամներ, կբերա։

Ախչիկ կըսա.— Իմացե՛ք ոզիր-ոքիլներ, թագավոր կըսա՝ «Իմ խրզինեն, իմ անդին քար քու խերն ա տարե». կըսա թե՝ «էդ մեկն ա». թե ես էդոր նման քսան խատ բերի՝ ղաթի թագավորն ա գող, թը չբերեցի, մենք ենք գողն, իմ հերն լէ, ընձի լէ, իմ տղեն թը կախա։

Էտոնք համաձայնան։

Թագավոր խինդ օր տվեց։ Ախչիկն, ուր խեր էկան տուն։ Էլավ խեծավ ձին ախչիկ, առավ ուր տղեն, գնաց էդ ախպրի մոտ։ Աստված կղանչեց, ըսաց. «Տե՛ր աստված, էս տղեն օր ըստեխ էղավ, դու էդ տղին ըրբխս (ապրուստ) տվեցիր, իմ չգինալով էն քար էրեխի ծեռ տվեցի, թագավոր էդ քար ապով գուզե օր իրեք արունք էնե, եթե քու ստեղծած խոքին դու չկորցուս, թագավոր չկենա կորցուս»։

Էդ ըսելուց վերջ, ախչիկ իշկեց ախպրի մեջ եռսուն քար էլավ։ Զքարեր վերցուց խեծավ ձին, ճամբախ գնաց։ Գնաց ուր տուն, ձիուց իջավ, տուն մտավ։

Խինգ օր թըմավ, էլավ վերցուց ուր խեր, ուր տղեն թագավորի պալատ գնաց։

Թագավորին ըսաց.— Կղանչա քու սադրազամ, ոզիրներուն։

Թագավոր կղանչեց ուր սադրազամ ոզիրներուն։

Ախչիկ ըսաց.— Թագավո՛ր, էն քու քար տու։ — Առավ էն քար, թալեց խուռջնու մեջ, խուռջու բերան գլխըվրցուց, թագավորի հ՝առեճ գարտկեց, ըսաց.— Դե՛, թագավոր, քու քար ո՞ր մեկն ա, ճանչցի։

Թագավոր չճանչցավ ուր քար։

Թագավորի սադրազամ, ոզիրներ բախշեցին էդ ախչկան։ Ախչըկա խեր թորկեցին ուր տուն գնաց։

Թագավոր ախչկա տղին շատ սիրեց, բերեց ուրին Անդրանիկ որթի էնեց։ Դնեց վարժատուն, կարթցուց։

Խելացի մարթիկ տեսան օր էդ տղեն շատ ղոչախ (կտրիճ) մարթըմ կեղի։

Թագավոր ճոչցեր էր, ըսին.— Թագավոր, դու ճոչցեր ես, անմահական ճուր բերես խմես կչըհելնաս։

Թագավոր ըսաց.— Ո՞ր կէրթա անմահական ջուր կբերա։

Խելոք մարթիկ ըսեցին.— Քու Անդրանիկ տղեն կենա բերա։

Կղանչեց ուր Անդրանիկ տղին ու ըսաց.— Իմ տղա, ես քըզի դրեր եմ, օր ըսօր ընձի պետք իգաս։ Ես խալիվորցեր եմ, էրթաս անմահական ճուր բերես։

Տղեն էլավ, պատրաստուն տեսավ, ճամբախ ընկավ։

Շատ ու քիչ աստված գինա ինչքան ճամբախ գնաց։ Գնաց դուրան տեղ մի, մե խալիվորըմ ճոկան (գավազան) զարկե դոշին։

Կըսա.— Բարի օր քըզի, պապե։

Կըսա.— Բարով էկար, թագավորի թոռ։

Կըսա.— Պապե, դու ին՞չ դինաս, ես թագավորի թոռն եմ։

Կըսա.— Ես գինամ, պտի դու մեկ լէ էս ճամփով իգաս։—Պապեն էլմը կխարցու.— Դեռ՞ր կէրթաս, թագավորի թոռ։

Կըսա.— Կէրթամ անմահական ճրու՝ թագավորի համար։

Կըսա.— Քու ճամփողի վիզ կտրի։

Կըսա.— Պապե ջան, ընձի օրշնա։

Կըսա.— Լաո՛, աստված քըզի օրշնա։ — Պապեն կըսա.— Կտեսնի՞ս էսա բանցր սար։

— Հա՛, կտեսիմ։

— Էդ ճամփեն կառիս, կէրթաս, սար գելիս։ Սարի գլոխ ախպուրմ կա, էն ախպուր անմահական ճուր ի։ Օր գացիր էկար, էլի պտի էս ճամփով իգաս։

Տղեն պապեի խետ բարև մնա էնելով ճամփախ ընկավ։

Էլավ սարի դլոխ, մութ տվեց, ախպրի կուշտ ինք պառկավ։ Սաբահտան ջուտ տեսավ օր էրկու եղվընեկ ախպրի վրեն իջան։ Ուրանց ջորեր խանելով, էղան մեկ տղա, մեկ ախչիկ։ Տղեն էդ մարթ տեսնելով ինչ օր ուր սիրտ ուրիշ փոխվավ։

Տղեն մտածմունքի մեջ էլավ ճուր լցեց, էլավ ճամփախ ընկավ։ էկավ խասավ պապեի մոտ։

Ըսաց.— Շատ շնորհակալ եմ քու ըսած խոսքերից։

Պապեն ըսաց.— Թագավորի թոռ, մեկ էլ կիգաս էս ճամփով, օր կիդաս, քու մամ խըտ քըղի կբերես։

Թագավորի տղեն էդ խոսք պապեից լսելով, շնորհակալ էղավ, ընկավ ճամբախ էկավ։

Գնաց թագավորի քաղաք, ճուր տվեց թագավորին։ Թագավոր օր ճուր խմեց, էղավ քսան տարեկան ջհելըմ։

Տղեն խնթրեց թագավորից, ըսաց.— էսօր ընձի դաստուր (հրաման) տաս, էրթամ իմ մամ տեսիմ իգամ։

Տղեն օր էգ խոսք ըսաց, թագավոր ըսաց.— Գնա՛, օրթի, էս բարիքն օր գուն ընձի էնեցիր, ապա ես գաստուր չի տա՞մ, էրթաս քու մամ տեսիս։

Տղեն գնաց ուր մամու մոտ։ Մամ ուրախցավ, ուր տղին ըսաց.— էս քանի օր դո՞ր չէրևիր։

Ըսաց.— Գացի թագավորին անմահական ճուր բերի։

Մեր խարցուց, ըսաց.— Ոչինչ բան չտեսա՞ր։

Ըսաց.— Մարե, ես օր գացի ախպրի վրեն, մութն էր, ջուր վերցի, էնտեխ պառկա։ Սաբահտան շուտ, էրկու եղվընեկ էդտեխ էկան, իջան ախպրի վրեն, ուրանց շորեր խանին, էն մեկ մարթ էր, իմ սիրտ փոխվավ. մտածմունքի մեջ ընկա, ճամբախ էկա։

Մերն ըսաց.— Լաո՛, չէ՞ էնի քո խերն էր։

Տղեն ըսաց.— Իմա՞լ կէղի էն իմ խերն։ Ապա ի՞նչ էնինք։

Ըսաց.— Լաո՛, քու պապուց դաստուր կառնինք, էրթանք քու խեր բալքի բերենք։

Տղի մամ խնթրվավ ուր խորից, ըսաց.— Իմ տղեն սուրփմ տեսե, կէրթանք էն սուրփ ուխտ։

Ըսաց.— Օրթի՛, կերթաք, գացեք։

էն սաբահտան ելան, մերն ուր տղեն, ընկան ճամբախ ու գացին։ Շատ ու քիչ աստված գինա ինչքան ճամբախ գացին։ Գացին էդ դուրան տեխ, պապեն էն տեխն էր։

Բարև տալով, պապեից խարցուցին.— Պապե, մենք ի՞մալ էրթանք իմ խեր բերինք։

Պապեն ըսաց.— Կերթաք էն ախպրի մոտ, տեխ մի կփորեմ քու մամուն, քու մամ էն դիաց մեջ կպախես։ Էն ժամանակ օր եղվընեկներ կիզան, ախպրի վրեն կիջին, ուրանց շորեր կխանեն, քու մամ էնոնց եղվընեկի թերուրներ շուտ ծեռ թալա ու վերու։ Աղալին զարկա ինոց թերուրներ վառա։ Էն ժամանակ էնոց սեյրին կպլի։ Զերկուս օր կրռնեք, կըսեք. «Ո՞ւր ի Արա՛բ, Արաբին էլ կանչե՛ք թ'իգա». կվերցուք ծեր խետ, կառեք կիգաք։

Պապե խոսքն օր պրծավ, ընկան ճամբախ ու գացին։ Գացին ելան ախպրի մոտ, ախպրի կշտին ուր մամուն խորոտ տեխմ փորեց, մամն էն տեխն պախեց։

Եղվընեկներ էկան, իջան ախպրի վրեն, ուրանց շորեր խանին, ախպրի մեջ մտան, կլողկնին, տղի մամ ծեռ թալեց, շորեր վերցուց։ Աղալին զարկեց, էդոնց թերուրներ վառեց։ Էնոնց սեյրին պլավ։

Շորեր տվեց խաքան, ըսաց.— Արաբին էլ կղանչեք։

Արարին կղանչին, Արաբն էլ էկավ. էղան խինգ ջան։ Ընկան ճամբախ, էկան պապե մոտ խասան։

Բարև տալով, պապե մոտ կանան։ Պապեն ըսաց.

— Արաբն հ'առեճ ի՞նչ տեսակ մարթ էր, էնեք առաջվան մարթ։

Փերի ախչիկ զարկեց, ըսաց.— Արա՛բ, առաջ ինչ իր, էլի էն դառնաս։

Արաբ էղավ մե խորոտ մարթըմ, քընց թագավորի տղեն խորոտ էր։

Պապեն ըսաց թագավորի տղին.— Էդա մարթ էս փարու իրիկն ա, էսա լէ քու կնիկն ա, էդա լէ, քու տղեն ա, դաստուր տու՛ր, թըխ Արաբն, ուր կնիկն էրթան։

Թագավորի տղեն դաստուր տվեց, Արարն առավ ուր կնիկ մեկ դիով գնաց, թագավորի տղեն, ուր կնիկ ուր տղեն դեպի էդ քաղաք էկան։

Էկան, գացին էդ ախչկա խոր տուն։ Խեր ուրախցավ ախչկա վրեն, ըսաց.

— Էրկուս գացի՛ք, իրեք էկաք։

Ախչիկն ըսաց.— Էդի, էսա տղի խերն ա։ Էդի թագավորի տըղա ա, ըսքան ժամանակ ես էտոր հետեն էր կզվռնի։

Էդ ախչկա խեր օր լսեց էդ բան, շատ ուրախցավ։

Թագավորի Անդրանիկ օրթին էլավ թագավորի մոտ գնաց։ Թագավոր ուրախութան խարցուց թե.

— Էս քանի օր ո՞ր դին էր դացե։

Ըսաց.— Դացե՛ր, իմ խեր բերեցի։

Թագավոր խարցուց.— Ի՞նչ խեր։

— Իմ խեր գացեր էր կարիրութուն, գացի, գտա, բերեցի։

Թագավոր օր լսեց էդ բանը, շատ ուրախցավ։

Տղեն ըսաց.— Թագա՛վոր, իմ խեր լէ թագավորի տղա ա, մենք կէրթանք մեր հայրենական էրկիր, խնթրեմ օր դաստուր տաս։

Տղեն էդ խոսքն օր ըսաց, թագավորին շատ ցավ տվեց, ըսաց.

— Չէ՞, ես քղի էնի ընձի Անդրանիկ օրթի, կերթա՛ս, աստվածն քու խետն էղի։

Էդ խոսքն ըսելուց վերջ, փարա, ապրանք, յոթ ջորաբեռ տվեց տղին։ Տղեն էլավ էկավ ուր խոր մոտ։ Էդ մարթն օր էղեր էր ուր մամուն խեր, էն լէ բավական մալ, ապրանք տվեց[1], էղան թամ բաղրդան մի։ Էլան ճամփախ ընկան դեմ ուրանց խոր էրկիր գացին։

Խոր քաղքին օր մոտըցան, մարթըմ ռաստ էկավ, մարթուն ըսեցին թե.

— Գնա թագավորին աչքալուս տու, ըսա. «Քու խարս գնաց քու տղեն գտավ, առավ, էկավ»։

Մարթն օր գնաց թագավորի քաղաք խասավ, թագավորի պալատ գնաց, թագավորին ըսաց.

— Քու աչք լուս, քու խարս քու տղեն գտավ, առավ էկավ։

Թագավոր էլավ էդ մարթուն բոլ փարա տվեց, էլավ ասքար էնեց, տղի հ՝առեճ ճամփեց, տղեն ուրախութան տուն բերեց։

Տուն օր էկավ տղեն, թագավոր խաբսին ըսաց.

— Շա՛տ ապրիս, ի՛մ խարս։

Խարսն էլավ թագավորի օտաց ընկավ։ Թագավոր բռնեց խաբսի ճակատ պաքեց։

Երկնուց իջավ իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ փայ էնողին։

Բն. տվեց չիք (Ծ. Կ.)։